



Saints Joachim & Anne Armenian Apostolic Church

Ս. ՅՈՎԱԿԻՄ ԵՒ ԱՆՆԱ
ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Pastor

Rev. Fr. DIRAN PAPAŽIAN, Archpriest

Տ. ՏԻՐԱՆ ԱՌ. ԷԶՆՅ. ՓԱՓԱԳԵԱՆ, Հովիւ

2 Ապրիլ, 1992

Գեր. Տ. Թաժակ Եղս. Պարսամեան,
Առաջնորդ,
Առաջնորդության Հայոց, Նիւ Եորկ, Մ.Շ.,

Գերաշնորհ Առաջնորդ Սրբազան,

ինչպէս պիտի յիշէք՝ վերջերս երբ Նիւ Եորք կը գտնուէի, առիթ ներկայացած էր որ բերանացի յայտնէի ձեզի թէ՛ երկու տարիէն՝ Նոյեմբեր 1993-ին, եկեղեցիս պիտի բոլորէ իր Տասնամեակը եւ թէ՛ կը ծրագրուի տօնախմբել այդ նշանակալից դարձակէտը արժանավայել կերպով, եւ թէ՛ առ այդ փափաքելի պիտի ըլլար ապահովել ձեր ներկայութիւնը Տասնամեակի հանդիսութեան:

Ներկայիս ուրեմն վերելի բերանացի արտայայտութիւնը կը փափաքինք ներկայացնել ձեզի գրաւորապէս:

Սիրելի Սրբազան, յանուն ծիսական Խորհուրդիս, այսու պաշտօնապէս կը հրահրենք ձեզ՝ Եկեղեցւոյ Տասնամեակի տօնակատարութեան, իբրեւ օրուան պատարագիչ-քարոզիչ եւ հանդիսութեանց նախագահող, որու թուական որոշուած է՝ Շաբաթ-Կիրակի, Նոյեմբեր 20-21, 1993:

Կը խնդրենք որ ձեր ժամանակացոյցին մէջ այժմէն արձանագրէք եւ ծիսական համայնքիս վերապահէք վերոյիշեալ թուականը:

Ուրախ կ'ըլլանք եթէ յարմար պատեհառիթով մեզի կանխաւ տեղեակ պահէք այդ կարելիութեան մասին, որու համար կանխաւ կը յայտնենք մեր շնորհակալութիւնը:

Խոնարհաբար,

Աղօթակից՝

Տ.Տիրան Ա.Բ.Տ. Փափագեան, Հովիւ

OK